ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ

27 փետրվար 2026 թվական N 01-Լ

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) *որոշում է.*

1. Հաստատել Հանձնաժողովի՝ անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման 2026 թվականի պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ

ք. Երևան

Հավելված
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
2026 թվականի փետրվարի N 01-Լ որոշման

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ

2026 ԹՎԱԿԱՆԻ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը հանրային համապատասխան պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների պահպանմանը հետևելու գործառույթի շրջանակներում իրականացնում է ռիսկային պաշտոններ զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների տարեկան մշտադիտարկում:

Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից նախապես սահմանված և հաստատած՝ հանրային իշխանության մարմինների (պաշտոնների) շրջանում:

Սույն պլանով սահմանվող մշտադիտարկման նպատակն է ուսումնասիրության և տվյալների համադրության միջոցով բացահայտել **Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, ինչպես նաև Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների և վերջիններիս տեղակալների** շրջանում առկա անհամատեղելիության պահանջների խախտումները, վերլուծել խախտումներ թույլ տալու պատճառները և, որպես վերջնանպատակ, իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ նվազագույնի հասցնելու խախտումների քանակը, ինչպես նաև իրազեկման և վերապատրաստումների միջոցով հնարավորինս կառավարելի դարձնելու անհամատեղելիության պահանջների պահպանմանն առնչվող խնդիրները:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը հետևում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, **համայնքների ղեկավարների**, նրանց տեղակալների, **Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների**, **նրանց տեղակալների** պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Օրենքով սահմանված **անհամատեղելիության պահանջների** և այլ սահմանափակումների պահպանմանը:

Նշված գործառույթի ապահովման շրջանակներում 2022-2025 թվականներին Հանձնաժողովն իրականացրել է պետական և համայնքային մի շարք պաշտոններ զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգում: Մշտադիտարկման իրականացման հիմքում դրվում են նաև ՀՀ կողմից ստանձնած միջազգային վերաբերելի հանձնառությունները: Մասնավորապես՝ Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (այսուհետ՝ ԳՐԵԿՈ) կողմից ընդունված՝ Հայաստանի Հանրապետության գնահատման 4-րդ և 5-րդ փուլերի զեկույցներով առանձնահատուկ ուշադրություն է դարձվել օրենսդիր և գործադիր իշխանության ներկայացուցիչների կողմից անհամատեղելիության պահանջների օրենսդրական կարգավորումների շրջանցման բացառմանը և նշված զեկույցներով տրված առաջարկությունները, հիմնականում, հիմք են հանդիսացել Հանձնաժողովի կողմից տարեկան մշտադիտարկման թիրախային կազմի ընտրության համար: Այսպես՝

- 2022 թվականին որպես ուսումնասիրության սուբյեկտ ընտրվել են օրենսդիր իշխանության ներկայացուցիչները՝ Ազգային ժողովի 108 պատգամավորներ՝ հաշվի առնելով, որ ԳՐԵԿՈ-ի կողմից ընդունված՝ Հայաստանի Հանրապետության 4-րդ փուլի գնահատման զեկույցով առաջարկվել էր համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ կանխելու համար առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնող պատգամավորների նկատմամբ կիրառվող և նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ ձեռնարկատիրական գործունության շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները: Ուսումնասիրության գործընթացը և արդյունքները ներկայացվել են Հանձնաժողովի՝ կիսամյակային հաշվետվությունների և 2022 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում (https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/07/995.pdf):

- Հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների պահպանմանը հետևելու գործառույթի շրջանակում 2023 թվականին ուսումնասիրել է գործադիր իշխանության՝ կառավարության, կառավարության ենթակա մարմինների, վարչապետի ենթակա մարմինների ղեկավար կազմը (ընդհանուր՝ 108 պաշտոնատար անձ): Մշտադիտարկման գործընթացի արդյունքներն ամփոփվել և հրապարակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղումով՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2024/03/20/1/:

- 2024 թվականին Հանձնաժողովը նախաձեռնել է տարածքային և տեղական մակարդակում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում: Հանձնաժողովի կողմից 2024 թվականին անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում իրականացնելու նպատակով որպես թիրախային պաշտոններ սահմանվել են տարածքային և տեղական մակարդակում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք՝ ՀՀ բոլոր մարզպետների և նրանց տեղակալների, ինչպես նաև ՀՀ բոլոր խոշորացված համայնքների ղեկավարների պաշտոնները (ընդհանուր՝ 102 անձ):

- 2025 թվականին ԳՐԵԿՈ-ի գնահատող խմբի կողմից Հայաստան Հանրապետության գնահատման 5-րդ փուլի արդյունքներով ներկայացվել են առաջարկներ՝ իշխանության գործադիր մարմիններում և իրավապահ մարմիններում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ: Նշված հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի կողմից 2025 թվականին անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում իրականացնելու նպատակով որպես թիրախային պաշտոններ սահմանվել են ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների և նրանց տեղակալների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների խորհրդականների պաշտոնները (ընդհանուր՝ 114 պաշտոնատար անձ): Մշտադիտարկման գործընթացի արդյունքներն ամփոփվել և հրապարակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղմամբ՝ https://surl.li/mpcrff:

Այսպիսով՝ 2022-2025 թվականներին, ընդհանուր առմամբ, ուսումնասիրություն է իրականացվել օրենսդիր, գործադիր մարմինների ներկայացուցիչների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց վերաբերյալ, այդուհանդերձ, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում ընդգրկված չեն եղել **Երևան քաղաքի ղեկավարը և վերջինիս տեղակալները, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարները և նրանց տեղակալները**, որոնց անհամատեղելիության պահանջների պահպանմանը հետևելը Հանձնաժողովի իրավասությունն է: Միաժամանակ, կարծում ենք նաև, որ սուբյեկտային կազմի ընտրության համար էական են վերջիններիս՝ օրենքով վերապահված լիազորությունները: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանվում են Երևանի վարչական շրջանի ղեկավարի լիազորությունները բնակիչների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության, ֆինանսների, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, հողօգտագործման, առևտրի և սպասարկման, կրթության, մշակույթի և երիտասարդության, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, աշխատանքի և սոցիալական պաշտպանության, գյուղատնտեսության բնագավառներում: Մասնավորապես, վարչական շրջանի ղեկավարը, ի թիվս այլնի, իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կարգադրություններ, կնքում է վարչական շրջանի տնօրինությանը հանձնած գույքը վարձակալությամբ հանձնելու պայմանագրերը,

կազմակերպում է Երևանի բյուջեի մուտքերի՝ իրեն հանձնարարված մուտքերի հավաքումը, մասնակցում է Երևանի բյուջեի նախագծի ձևավորմանը ավագանու սահմանած կարգով, տնօրինում է Երևանի բյուջեով վարչական շրջանի ղեկավարի լիազորությունների իրականացման համար հատկացված միջոցները, ապահովում է դրանց նպատակային օգտագործումը, ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը, կազմակերպում է իր տնօրինմանը հանձնված Երևանի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումը, օրենքով սահմանված կարգով տալիս է քաղաքային նշանակության գովազդային գոտի չհամարվող տարածքներում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն, կազմակերպում է ոչ քաղաքային նշանակության փողոցների, հրապարակների, բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը, Երևանի գլխավոր հատակագծին, վարչական շրջանի կամ դրա առանձին հատվածների գոտիավորման նախագծերին, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին համապատասխան՝ սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում վարչական շրջանի տնօրինմանը հատկացված հողամասերը, և այլն:

Միաժամանակ, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի տեղակալներն իրականացնում են քաղաքապետարանի կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունները, մասնավորապես՝ համակարգում են քաղաքապետարանի, Երևանի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքները՝ քաղաքապետի կողմից իրենց հանձնարարված բնագավառներում, իրենց լիազորությունների սահմաններում համակարգում են քաղաքապետին օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված բնագավառներում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ՝ քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև Երևանի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով իրականացվող աշխատանքները՝ տալով ցուցումներ և հանձնարարականներ, համակարգում են իրենց հանձնարարված բնագավառներում քաղաքապետարանի ստորաբաժանումների, ինչպես նաև Երևանի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը, իրենց հանձնարարված բնագավառներում համակարգում են համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները և այլ գործառույթներ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 102-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ վարչական շրջանի ղեկավարի տեղակալը (տեղակալները) իրականացնում է (են) վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությամբ իրեն (իրենց) վերապահված լիազորությունները: Ըստ այդմ՝ վարչական շրջանի ղեկավարի տեղակալները համակարգում են աշխատակազմի, ղեկավարի ենթակայության կազմակերպությունների աշխատանքները՝ ղեկավարի կողմից իրենց հանձնարարված բնագավառներում, իրենց լիազորությունների սահմաններում համակարգում են ղեկավարին օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված

բնագավառներում աշխատակազմի բաժինների, ինչպես նաև ղեկավարի ենթակայության կազմակերպությունների միջոցով իրականացվող աշխատանքները՝ տալով ցուցումներ և հանձնարարականներ, աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան սահմանում են իրենց հանձնարարված բնագավառների՝ աշխատակազմի բաժիններին տրվող կոնկրետ հանձնարարականները և առաջադրանքները, իրականացնում դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն, համակարգում են իրենց հանձնարարված բնագավառներում աշխատակազմի, ինչպես նաև ղեկավարի ենթակայության կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը, իրենց հանձնարարված բնագավառներում համակարգում են համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները և այլն:

Միաժամանակ, Երևանի քաղաքապետի՝ 2018 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 3407-Ա որոշմամբ՝ Երևանի վարչական շրջանների կարիքների համար կատարվող գնումների մասով պատասխանատու ստորաբաժանում են սահմանվել համապատասխան վարչական շրջանների ղեկավարները, ովքեր, ըստ այդմ, ներգրավված են նաև վարչական շրջանների կարիքների համար պատվիրվող գնման գործընթացներում:

Հիմք ընդունելով պաշտոն զբաղեցնող անձանց ներկայացված շրջանակի լիազորությունները, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2024 թվականին իրականացված մշտադիտարկման սուբյեկտային կազմում չեն ներառվել սույն պաշտոնները, որոնք սակայն անհամատեղելիության պահանջների պահպանման համատեքստում Հանձնաժողովի սուբյեկտ հանդիսացող անձինք են, Հանձնաժողովի կողմից 2026 թվականին անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում իրականացնելու նպատակով որպես թիրախային պաշտոններ սահմանվել են Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, ինչպես նաև Երևան համայնքի վարչական բոլոր շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնները:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ. ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Հանձնաժողովի կողմից 2026 թվականին անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում իրականացնելու նպատակով որպես թիրախային պաշտոններ սահմանվել են Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, ինչպես նաև Երևան համայնքի վարչական բոլոր շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնները (ընդհանուր՝ 40 անձ):

ՌԻՍԿԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

Մշտադիտարկման գործընթացում որպես ռիսկային ցուցիչ դիտարկվում են համապատասխան պաշտոն զբաղեցնող անձանց վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

1. արժեթղթերի առկայությունը,
2. մեկից ավելի աղբյուրից ստացված աշխատանքի վարձատրությունը,
3. մասնակցությունն առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում,
4. ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում,
5. պաշտոնատար անձի բաժնեմասի հավատարմագրային կառավարման վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը,
6. անհատ ձեռնարկատեր հանդիսանալու վերաբերյալ տեղեկատվությունը,
7. կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոնի զբաղեցումը,
8. պաշտոնատար անձանց կամ վերջիններիս հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կամ ներկայացվածությամբ առևտրային կազմակերպությունների դեպքում դրանց՝ պետական կամ համայնքային գնումների գործընթացներին մասնակցությունը:

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԵԹՈԴԸ (ՀԱՄԱՌՈՏ)

Մշտադիտարկումը նախատեսվում է իրականացնել չորս փուլով.

1. տվյալների հավաքագրում,
2. տվյալների ուսումնասիրություն,
3. տվյալների գնահատում (ամփոփում),
4. հրապարակայնության ապահովում:

1. Տվյալների հավաքագրում

1.1 Տվյալների հավաքագրումն իրականացվում է Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատակիցների կողմից՝ Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական շտեմարաններում, բաց աղբյուրներում, մեդիա

հրապարակումներում, ինչպես նաև հայտարարագրերի համակարգում առկա վերաբերելի տեղեկությունների հավաքագրման միջոցով՝ ընդհանուր excel ձևաթղթում:

Նշված համատեքստում ուսումնասիրության ենթակա են նաև պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրերը (դրանցում ներկայացված տվյալները), որոնք համադրվում են իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված տվյալների հետ:

1.2 Յուրաքանչյուր պաշտոնատար անձի համար վարչության նշված աշխատանքի պատասխանատու աշխատակցի կողմից ստեղծվում է անվանական թղթապանակ, որտեղ պահպանվում են անձի վերաբերյալ հավաքագրված, այդ թվում՝ վերաբերելի փաստաթղթերի կրկնօրինակները:

1.3 Տվյալների հավաքագրման փուլում թղթապանակներին հասանելիություն են ունենում միայն վարչության աշխատակիցները (այն աշխատակիցները, որոնք ներգրավված կլինեն կոնկրետ առաջադրանքում), ստորաբաժանման ղեկավարը, Հանձնաժողովի անդամները:

1.4 Տվյալների հավաքագրման փուլում պաշտոնատար անձանցից, այլ գերատեսչություններից տեղեկություն և/կամ պարզաբանում հայցելու հարցը ենթակա է քննարկման համակարգող անդամի հետ, ըստ անհրաժեշտության՝ նաև Հանձնաժողովի նիստում:

1.5 Պաշտոնատար անձի վերաբերյալ տվյալների հավաքագրումը համարվում է ավարտված, եթե առերևույթ խախտումը կամ խախտման բացակայությունն ապացուցելու համար անհրաժեշտ բոլոր նյութերն ապահովված են:

2. <u>Տվյալների ուսումնասիրություն</u>

2.1 Հավաքագրված տվյալների ուսումնասիրությունն իրականացվում է տվյալների համակողմանի վերլուծության, դրանց համադրման միջոցով:

2.2 Տվյալների ուսումնասիրությունը սկսվում է Հանձնաժողովին հասանելի պաշտոնական տեղեկատվական աղբյուրներից ստացված տեղեկությունների ուսումնասիրությունից՝ արդյունքները համադրելով մեդիա հրապարակումների և այլ բաց աղբյուրների տեղեկությունների հետ:

2.3 Ըստ անհրաժեշտության՝ ուսումնասիրվում են նաև պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկությունները:

2.4 Ուսումնասիրություններն իրականացվում են միևնույն տեխնիկական և եզրույթային ձևակերպումների միջոցով՝ աշխատանքի միասնականությունն ապահովելու նպատակով:

3. Տվյալների գնահատում (ամփոփում)

3.1 Ուսումնասիրությունների փուլն ավարտելուց հետո հավաքագրված տեղեկությունները և ուսումնասիրության տեղեկանքը ներկայացվում է վարչության պետին՝ ըստ անհրաժեշտության՝ հետագա քննարկումներն ապահովելու նպատակով:

3.3 Տվյալների հավաքագրման, ուսումնասիրության, ինչպես նաև գնահատման (ամփոփման) փուլում վարչության աշխատակիցների հետ վարչության պետը պարտավոր է ապահովել անհրաժեշտ քննարկումները և փոխօգնությունը:

3.3 Ուսումնասիրության արդյունքում համապատասխան վարույթի հիմքեր արձանագրելու դեպքում ուսումնասիրության արդյունքները ներկայացվում են քննարկման Հանձնաժողովի նիստում՝ հետագա գործողությունների որոշման նպատակով, իսկ հիմքերի բացակայության դեպքում՝ այդ մասին զեկուցվում է Հանձնաժողովին:

3.4 Մշտադիտարկման աշխատանքները համարվում են ավարտված՝ Հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքները դրական գնահատելուց հետո:

4. Հրապարակայնության ապահովում

4.1 Մշտադիտարկման աշխատանքների հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով՝ արդյունքները պարբերաբար ենթակա են հրապարակման Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը՝ պաշտոնը դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա **մայիսի 31-ը:** Հաշվի առնելով օրենսդրական սույն կարգավորումը՝ նպատակահարմար է անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման գործընթացը սկսել տարեկան հայտարարագրերի հրապարակումից հետո՝ ուսումնասիրության հիմքում առավել ամբողջական տվյալներ ներառելու նպատակով:

Այսպիսով՝ անհամատեղելիության պահանջների մշտադիտարկումը նախատեսվում է սկսել **2026 թվականի հունիսի 1-ի**ց՝ հայտարարագրերի հանձնման գործընթացն ավարտելուն զուգահեռ: Այն դեպքում, երբ պաշտոնատար անձի կողմից հայտարարագիրը ներկայացվել է մինչև մայիսի 31-ը, տվյալ անձի վերաբերյալ ուսումնասիրությունը մեկնարկում է համապատասխանաբար հայտարարագրի հրապարակման օրվան հաջորդող ամսվանից: Մշտադիտարկման գործընթացի ամփոփումը նախատեսվում է սկսել 2026 թվականի դեկտեմբերի 1-ից՝ աշխատանքային տարին ամփոփելուն զուգընթաց:

Ըստ այդմ՝ 2026 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել **ընդհանուր թվով 40**[1] պաշտոնատար անձի անհամատեղելիության պահանջների պահպանման ուսումնասիրություն: Սահմանված ժամանակահատվածում մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող անձանց փոփոխության դեպքում՝ տվյալ պաշտոնին նշանակված (ընտրված) անձանց նկատմամբ անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկումը կսկսվի վերջիններիս կողմից պաշտոնի ստանձնումից հետո մեկ ամիս անց:

[1] Հաստիքացուցակը՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման՝ https://www.arlis.am/hy/acts/220798